



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.yasu.am

№ 167 «__23__»__11__2017 թ.

Արձանագրություն N 167

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ-ի նոյեմբերի 17-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 19-ը:

Օրակարգ

1. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվությունը/զեկ.՝ ամբիոնի վարիչներ Ա. Ենգոյան, Գ. Քեոյան, Վ. Պետրոսյան, Վ. Ազյան, Ն. Չալքմյան/:
2. Հեռակա բաժնի սոց. հարցումների արդյունքների քննարկում /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
3. Գիտական աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Բարայեյան/:
4. Հեռակա ուսուցման ասպիրանտների ատեստավորման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Բարայեյան/:
5. Ֆակուլտետից գործուղման մեկնած դասախոսների հաշվետվություն /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Բարայեյան/:
6. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ամբիոնի վարիչների ներկայացրած տարեկան հաշվետվությունները գնահատել բավարար:
2. Ընդունել ի գիտություն հեռակա բաժնի սոց. հարցումների արդյունքները:
3. Երաշխավորել հրատարակության՝
ա/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ Ա. Մանուկյանի, ք.գ.թ. Ս. Ջանգոզյանի և մագիստրանտ Ա. Չիչյանի համահեղինակությամբ «Հակակոռուպցիոն պայքարի առանձնահատկությունները խորհրդարանական կառավարման համակարգում» վերնագրով մենագրությունը:

4. Ատեստավորել հեռակա ուսուցման ասպիրանտուրայում սովորող հետևյալ ուսանողներին
և երաշխավորել ուսուցման հաջորդ տարի փոխադրվելու համար.

ա/ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի
ասպիրանտներ Ժաննա Հարությունյանին, Լիլիթ Սարիբեկյանին, Էդգար
Էլբակյանին, Լուսինե Շիրինյանին,

բ/ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտներ՝
Արեն Առաքելյանին, Խոսրովադուխտ Ազատյանին, Աննա Գալիկյանին, Նարեկ
Գրիգորյանին, Նանե Վարդևանյանին, Նարեկ Տիրատուրյանին, Տաթևիկ
Մինասյանին,

գ/ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտներ
Հասմիկ Ղազարյանին, Սիրանուշ Մելիքյանին, Ալվարդ Սարգսյանին և Արփինե
Ասատրյանին:

5. Ընդունել ի գիտություն միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ.
Պետրոսյանի և «Չինարեն լեզվի և մշակույթի կենտրոնի» դեկավար պ.գ.թ., դոցենտ Ա.
Իսրայելյանի Չինաստան կատարած գործուղման հաշվետվությունը:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա. Իսրայելյան

Իսկականի հետ ճիշտ է՝